

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Եւ Պարոյ 8 ՄԶՃ.  
Պատուագ 10 ՄԶՃ.  
Վեցամսեյ Եւ Պարոյ 4 ՄԶՃ.  
Պատուագ 5 ՄԶՃ.  
Շանուցման տողը մէկ անգամի հա-  
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-  
մար 2 դուրուշ, աւելի անգամներու  
համար զատ սովորութիւնն կը-  
լայ :



ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գացած լրագրաց ճանրու-  
ած արժէքը խմբագրութեան վրայ է :  
Լրագրաց վերաբերեալ նամակ  
կամ օր և ինչ գրութիւն խմբագր-  
— Տնօրէնին պիտի ուղղուի : Ղալա-  
թի Ստանբուլի շառաւիղի թիւ  
198, Եւրոպայի, Մայիսի գրասեն-  
եակը :  
Հանրու ծախքը չգնաւորուած նա-  
մակ չընդունուիր :

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 13 ՍԵՊՏԵՄԲԵՐ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թէև պաշտօնական հեռագիր հը-  
րատարակուած չէր տակաւին մեր  
գրած միջոցին, բայց կըսուի թէ Մէհ-  
մետ Ալի փաշայէն Բ. Դուռն եկած  
հեռագիր մը կը ծանուցանէ թէ Պիե-  
լայի կողմը Ռուսիոյ թագաժառանգ-  
Մեծ զուբսին բանակին հետ պա-  
տերազմի սկսած է : Ռուսը չորս հա-  
զարի չափ մեղաւալ ու վերաւոր ունե-  
ցեր էին, բայց պատերազմը տակա-  
ւին վերջացած չէր. ուստի կը յու-  
սացուի որ վախճանը պաշտօնական  
հեռագրաւ այսօր կը հրատարակի :  
Մէհմետ Ալի փաշա իւր աջ թեկին հը-  
րամատարութիւնն Ահմէտ Է. յուս-  
չային, և ձախ թեկին Բարձր խըտի-  
վին որդի Հասան փաշային տալով ինք  
ալ կեդրոնին դուրսը կեցեր է. թըր-  
նովայէն Ռուսաց մատասաներորդ զո-  
րաբանակն արագաբայլ օգնութեան  
կերթար թագաժառանգին :

Օսման փաշայէն հեռագիր չկայ,  
թեկերը խզուած ըլլալով, բայց կը  
յուսացուի որ Շէվրէթ փաշա իւր օգ-  
նութեան տարած 25 վաշտ նոր զօրօք  
իշխալ զօրավարին հետ միացած է,  
քանզի թէև Ռուսը Օսմանեան դիր-  
քերն յարձակմամբ առնէ յուսահա-  
տելով կանոնադրապէս պաշարելու  
որոշում տուած կերակին, բայց Բիշվ-  
նա բաղմամբ իւր ամրութիւններ ունի,  
որը բարձանց վրայ են և իրարու հետ  
հաղորդակցութիւն ունին ամրացած  
ճանապարհներէ. շատ մը կիրճեր և  
լեռներ ալ կան, որոց պաշարման հա-  
մար Ռուսը իրենց ունեցածէն աւելի  
զօրաց կարօտութիւն ունին : Վերջին  
լրոյ նայելով Բիշվայի ետեւի կող-  
մէն Մոֆիայի ճանապարհը դեռ բաց  
էր, և հաւանական է որ Շէվրէթ փաշա  
ալ անկէ գնացած ըլլայ : Ռուսաց մէկ  
պաշտօնական հեռագիրն, որ Պուր-  
բէշէն սեպտ. 16 թուով Աթէնքի Ռու-  
սաց դեսպանատան կողմէն հեղինա-  
կան լրագրաց հաղորդուած է, կը  
ծանուցանէ թէ սեպտ. 14ին ուրբաթ  
օրը Նիքօլա Մեծ զուբսը Բիշվայի  
բոլորովին եղած դիրքերն աչքէ ան-  
ցուցեր և նոր թնդանօթներ դնելու  
տեղեր որոյր է : Նոյն իրիկունն Օս-  
մանեան զօրքը ջանացեր է կրկնցայի  
ամրոցն ետ առնուլ. բայց Ռուս և Ռու-  
մէն զօրաց կողմէն ետ մղուեր է :  
Սեպտ. 13ին շարաթ օրը Բիշվայի ռըմ-  
բակոծութիւնը կը շարունակէր. Ռու-  
սաց կորուստն յարձակման սկիզբէն  
այն է սեպտ. 7էն մինչև 14ը 12,000  
մեղաւալ և վերաւոր էր, որոյցմէ երեք  
հազարը միայն մեղաւալ, ասոնցմէ և  
երեք հազարն սպայ ըլլալով. Ռուս-  
նաց կորուստն ալ երեք հազար էր,  
զինուոր և սպայ : Մեղաւալ և վերա-

ւորեալ Ռուսէն սպայից թիւը վաթ-  
սուն էր :

Այս ահագին կորուստները ծա-  
նուցանողը Ռուսաց պաշտօնական հե-  
ռագիրն է. պէտք է նշանակել որ  
այսչափ սպայից և զօրաց կորուստմը  
ձեռք բերուած արդիւնքն է միայն  
գլխաւորապէս կրկնցայի ամրոցն, և  
մէկ երկու ուրիշ երկրորդական ամ-  
րութիւններ պաշտպանողական առա-  
ջին դէմն վրայ : Սեպտ. 16ին մեծ  
պատերազմ մ'երկր է դարձեալ ա-  
պարդին : Բայց Ռուսը թէ և առա-  
ջին դիմն ալ ամբողջ ձեռք բերին,  
երկրորդ և երրորդ դիմերն աւելի  
ամրացած պիտի դնեն, և կրկնցա-  
յի նման տասնեակներ չափ ամրոցէ  
զատ ամբար բանակեալ մ'ալ կայ, որոց  
ամենն ալ յարձակմամբ առնելու հա-  
մար եթէ Ռուսը այսչափ կորուստ  
տան, իրենց դործին տակաւին կէսը  
չկատարած իրենց զօրութեան մեծ  
մասը պիտի սպառուի : Հետեւաբար կա-  
նոնաւոր պաշարումէ զատ միջոց չէր  
մնար : Բայց կանոնաւոր պաշարութեան  
յառաջ տանելու համար պէտք էր որ  
ձեռք չմտնեցած պատերազմի դաշ-  
տը գտնուող Օսմանեան բանակներուն  
յաղթած ըլլային, մինչդեռ ընդհա-  
կառակն Մէհմետ Ալի փաշա՝ Ռուսիոյ  
թագաժառանգ մեծ զուբսը Ռադ-  
կըրատի առջեւէն յաղթանակաւ մին-  
չև Պիեշա վանքէ : Եթէ Պիեշայի առ-  
ջև մղուած ճակատամարտն ալ Մէհ-  
մետ Ալի փաշա վաստակած է, ինչպէս  
կը յուսացուի, Ռուսաց դիրքը Պուր-  
բէշայի մէջ իրատ փոստաւոր կըլլայ :  
Դուրսէ փոստանակ իրենք Օսմանեան  
զօրաց Սեպտ. 16 պատերազմուելու, ի-  
րենց համար Պորոթնիոյ անցը մ'ու-  
նենան : Արդէն Ռուսիոյ մէջ հասա-  
րակաց կարծիքն յուսուի սկսած է  
զօրաց այսչափ կորուստներուն և ձա-  
խողութեանց վրայ : Հրամանատար-  
ները խտրել կը քննադատուին, և  
զօրքն իսկ անոնց վրայ իւր փոստ-  
հովիտներ կորուստներ կ'սկսի : Ռու-  
սիոյ մէջ ցրուած տեղաւորներ չարա-  
չար կը դատապարտեն այս պատե-  
րազմը բռնապետութիւնը փառա-  
ւորելու համար ձեռնարկեալ հա-  
մարելով : Երբ ժողովրդական կերքն  
այս ատարձան կը յուզի, դժուարին  
և դրեթէ անհնար է անկէ նոր զո-  
հողութիւններ պահանջել. և որո՞յ  
համար են այս զոհողութիւնները,  
Պուրլաներն ապատելու, բայց Ռուսը  
կ'զգան որ նոյն իսկ իրենք ապատե-  
լութեան կարօտ են՝ զոր միապետութիւ-  
նը կը զլանայ իրենցմէ : Կը հարցնեն  
նաեւ թէ արդեօք Պուրլաներն այս-  
չափ զոհողութեանց արժանի են :  
Պուրլանի գտնուող սպայից կողմէն  
իրենց բարեկամաց և աղքատաց  
զբուած նամակները Պուրլանաց վրայ  
զբուած համակրութիւնը կը ցրեն, որը  
զանոնք կամբաստանէ իրեն շահատէր,  
քանզի Ռուսներէն որչափ կարելի է

է արծաթ քաշելու կաշխատին. միւ-  
րը զանոնք կը նկարագրէ իւրեւ խար-  
դախ, քանզի Ռուսաց շարժումները  
լրտեսելով գաղտնապէս թուրքերուն  
իմաց կուտան եղեր. երրորդ մը կը  
դաշմակցի անոնց ընթացքին վրայ,  
վստն զի Ռուսը քաղաք մը կամ գիւղ  
մը գրաւելուն պէս, Պուրլանք ալ իս-  
կոյն իսլամաց ստացուածք կողոպ-  
տել կ'սկսին :

Վերջապէս « ազատարարներն »  
ոմանք թէպէտ տակաւին համակրու-  
թեամբ կը խօսին Պուրլանաց վրայ,  
բայց շատը զանոնք վար կը դարնեն,  
անշուշտ բարկութեան կիրքով, քան-  
զի այդ Պուրլաներուն պատճառաւ  
Գանուբի դաշտերն ու Պալքաններն  
այսչափ Ռուսաց արեւմտեւ ներկուե-  
ցան, և մինչև վախճանի ամիսները  
զինուորական պոյոյ մ'ընել կարծող-  
ներն հասկցան թէ որչափ մեծապէս  
խաբուած էին : Ինչո՞ք ինչպէս զօրավա-  
րն սպայակցային կարծեաց դէմ ա-  
ռաջարկած էր արագապէս Պալքան-  
ներն անցնելով Կ. Պոլսոյ վրայ քաշել,  
կարծելով թէ Պուրլանաց ապստամ-  
բութիւնն և Օսմանեանց անկարողու-  
թիւնը շուտով պատերազմը Ռուսաց  
յաղթանակաւ պիտի վերջացնէ : Բայց  
մ'ընտի սխալ էին բոլոր այս հաշիւ-  
ներն, որը Ռուսաց ձախողութեան  
և զինուորական համբաւին անկման  
պատճառ եղան : Ռուսիա ալ 1870ին  
Գաղղիոյ նման պատերազմի պատրաստ  
չէր, բայց Գաղղիոյ նման իւր կառա-  
վարողներուն սխալմանց զոհ եղաւ :  
Այս սխալներն անցեալ օր կը իշխէին.  
նորմա միւս ալ որ ոչ նուազ մեծ է :  
Սլոնաւուր լրագրին թղթակցը Սի-  
նանքէյի մօտ Մէհմետ Ալի փաշային  
տարած մէկ նոր յաղթութեան վրայ  
խօսելով կըսէ թէ պատերազմի դաշ-  
տին վրայ ձգուած Ռուսաց հրացան-  
ներն Սլոնաւուրէն փոխուած Բօ-  
քըրի հրացաններ էին, որոց գնդակն  
Օսմանեան զօրաց Մարթինի Հանրի  
հրացաններէն ա՛յնչափ նուազ կեր-  
թար, որ Օսմանցիք մեծ կոտորած  
կուտային Ռուսաց մինչև որ ասոնք  
իրենց հրացանի գնդակները թըր-  
նամոյն հասցնելու համար յառաջ  
քաշէին : Ասկէ զատ Ռուսը բոս հին  
ապագայիստութեան խմբովին կըշար-  
ժէին իրենց զինուորները չլինալով  
Օսմանցիներուն նման իւրեւ որսորդ-  
տարածել : Նորահնար զենքերու ժա-  
մանակ այս խմբովին շարժումը մեծ  
կորուստ կը պատճառէ : Այս ամենը  
կը ցուցնէ թէ Գրքմի պատերազմէն  
ի վեր Օսմանցիք Ռուսերէն աւելի  
զինուորական յառաջդիմութիւն ը-  
րած են :

Աւստրիական Բօսնիոյ ստանա Բօ-  
լիթիք լրագիրն ամայս առաջին օ-  
րերն հրատարակած մէկ յօդուածին  
մէջ հետեւեալ տեղեկութիւնները կու-  
տայ երկու պատերազմով տեղութեանց  
զինուորական վիճակին վրայ :

« Բիշվայի առաջին կռուէն (օ-  
գոստ. 8/20էն) ի վեր Ռուսերն ամեն  
օր 2-3000 մարդ օգնութիւն ստացան,  
գլխաւորապէս երկու բաժին (Ֆրոյա)  
հետեւակ և կէս բաժին որսորդ իրենց  
դաշտային թնդ անօթներով. քանի մը  
գունդ հեծելազօր, պաշարման թըն-  
դանօթներ, պակսածներուն տեղը  
լցնելու համար պահեստի զօրաց ուն-  
դեր, վերջապէս 100000 մարդ ամեն  
տեսակ զէնքէ :

« Այս օգնութեանց շնորհիւ, Ռու-  
սական զօրաց թիւն » որ պատերազ-  
մը և հիւանդութեամբը նուազած  
էր, ոչ միայն իւր սկզբնական դու-  
մարին հասաւ, այլ և մեծապէս ա-  
ւելցաւ : Ռուսը օգնութիւնք ալ կան  
ճանրան. կայսերական պահապան  
զօրքը, ումաճիգ հեծելազուորներն  
և երկու բաժին հետեւակ, որոց թիւ-  
ւը 100000ի կը հասնի : Ասոնցմէ զատ  
բանակին ետեւը ծառայելու համար օ-  
գոստոսի սկիզբէն հրաման եղաւ 36  
վաշտ պահեստի զօրքէ զատ բանա-  
կին չորս բաժիններուն մէջ ալ պա-  
հեստի զօրաց ունդեր պատրաստել :

« Գրօշակի ներքեւ կողմած առաջին  
կարգի պահեստի զօրաց 180000 մար-  
դէն զատ տակաւին նոյնչափ մ'ալ կը  
գտնուին նոյն կարգի պահեստներէն :  
Մնաց որ, ներկայ տարւոյս նոյնմէք  
13էն մինչև յառաջիկայ տարւոյն յուն-  
վար 13 կատարուելիք կանոնաւոր զին-  
ւորագրութեամբ 218000 մարդ ի զէն  
պիտի կոչուին :

« Արդ, այս միջոցիս Տոպրուճայի  
մէջ մէկ ու կէս զօրաբանակ և քանի  
մը գունդ խաղախը կան, որոց գու-  
մարը 40—45000 պատերազմողաց կը  
հասնի : Իսկ Նիկոպօլոյ, Բիթլիսի և  
Պալքանաց կիրճերուն միջև եօթն զօ-  
րաբանակ կայ 25 ահան հազար զօ-  
րք բաղկեցեալ, միանգամայն 10  
գունդ խաղախ հեծեալ, որսորդաց  
կիսաբաժինք, Ռուսէնց երրորդ և  
չորրորդ զօրաբաժինները, Պուրլանաց  
լէգէոնը, որոց գումարը 200000էն ա-  
լի է :

« Միւս կողմէ թուրքիա ալ իւր  
ժամանակը պարապ չանցուց : Զար-  
մանալի փութածանութեամբ մը տե-  
լութեան ամեն կողմերէն ու խորշե-  
րէն զօրք հաւքեց ու գէպի Պալքան-  
ները մղեց : Կարծես թէ գտնուին  
տակէն նորանոր վաշտեր գոյս հա-  
նելով այնպիսի զօրութիւն մը պար-  
զեց, զոր մարդ չէր յուսար, ոչ բա-  
րեկամն, ոչ թնդամին : Այժմ թուր-  
քիա Պուրլանի մէջ ունի կանոնաւոր  
զօրք, Բիշվայի մօտ Օսման փաշայի  
հրամանատարութեան ներքեւ 60000,  
Սլոնաւուր փաշայի հրամանատարու-  
թեան ներքեւ 50000, Եւրոպա-Ռուս-  
ճուգի դէմն վրայ Մէհմետ Ալի փա-  
շայի և Ահմէտ Է. յուս պաշայի հրա-  
մատարութեան ներքեւ 10000, Մի-  
լիթիք-Վալարայի դէմն վրայ 50000 և  
չափ. ընդ ամենն 260000 մարդ, ու



Բոցմէ փոքր գումար մը վար պէտք է երթալ ոչ պատերազմադաց , մասն զի թաւրքերը միմիայն բեռներու և կարասիաց փոխադրութեան կը դորձած են Պարզաբնիկը և թուրքաց այս իրական զօրութեան վրայ շէտք է աւելցնել անթիւ անկանոն զօրաց հրոսակը , քաղաքային նորակազմ զինուորութիւնը , գեա. զէնք կրեալ հասակին չհասած ինչպէս նաև զինուորական տարիքն անցուցած բուլը իրամաց գործակի ներքև կոչուելն : Այս ամեն միջոցներով թուրքերը զօրութիւնն իւր վերջին կէտն հասած է : Իսկ Ռուսաց կողմէ օգնական զօրութիւնը նոր հասնիլ կըսկընին :

« Բլէշլայի ճակատամարտէն ետև յայտնի տեսնուեցաւ որ Ռուսք չառ տկար էին թուրքերը վանելու համար , միանգամայն կարծիք կար թէ թուրքերն ալ Ռուսերն ետ մը զեղու չափ հզօր չէին : այս կարծիքն յետոյ իրականութեան դարձաւ : Կրնայ ըսուիլ թէ այսօր ալ վիճակը նոյն է . երկու կողման զօրութիւնն իրարու յառաջդիմութիւնը կարգը լուն : Միկայն կրնայ ընդհանրուիլ այն վիճակն՝ որ Ռուսք առաւելութիւն պիտի ունենան : Ըստ ամենայն երևութից , երկու ուստից միոյն կամ միւսին գերազանցութիւնը որոշելիք մեծ հարուածին նախաձեռնութիւնը Ռուսք պիտի ընեն : Բայց ասոր համար՝ պէտք է ի հաշիւ մտնել երկու հաւասարապէս կարեւոր տարրաց հետ , այն է ճանրան գետնուղ օգնութեանց և աշտան եղանակին հետ : Առաջինները պիտի սպասուին . իսկ երկրորդն անյապաղ գործել կըպահանջէ . ապա թէ ոչ , աշտան անձրևներն ու ձմեռը կրնան Ռուսական զօրքն աննպաստ պայմաններու մէջ դնել , եթէ թուրքերը ձախողարար կամ՝ հաշտուիլ դէպքերը չփութացընեն , »

Վիեննայի թակալով լրագիրն ալ սեպտ. 12 թուով հետևեալ անդեկութիւնը կուտայ .

« Սերբիոյ կառավարութիւնն երկար ժամանակէ ի վեր կաշրտաէր Սերբիոյ հետ գաղանադութիւն մը կնքելու հաճեցնել Ռուսիոյ կառավարութիւնը : Ռուսաց զինուորական հրամանատարներն երկար ժամանակէ ի վեր չափուած էին յիշեալ գաղանադութիւնը կնքելու խորհրդին . գլխաւոր արգելքը կորչաքօֆ իշխանին ընդդիմութիւնն էր , որ քաղաքագիտական պատճառներով չէր ուզեր որ Սերբիոյ պատերազմին մասնակցի : Բայց Գերմանիոյ և Աւստրիոյ կաշարաց վերջին տեսակցութենէն ետև՝ կորչաքօֆ իշխանն ալ իւր միտքը փոխեց , և Յէրէթշէֆ իշխանին յանձնուեցաւ գաղանադութիւնը կնքել Սերբիոյ հետ :

« Գաղանադութիւնը՝ մեզ արուած հաւատեաց նայելով՝ խիստ օգտակար է Սերբիոյ : Ռուսիա պատերազմին բոլոր ծախքն իւր վրայ կաւնուամիսը չորս միլիոն ֆրանք պիտի տայ , սակէց դատ խօսք կուտայ որ հաշտութիւն կնքուած ժամանակ հոգալին ընդարձակութիւն ձեռք բերէ Սերբիոյ համար : Հին Սերբիոյ մեծ մասը մինչև Բրիշթինայէն անդին , ինչպէս նաև Նիշի շրջանակը մինչև Սոֆիա Սերբիոյ տալ խոստացած է Ռուսիա : Իսկ Պոնիոյ կողմէն մաս մը տեղ չպիտի պահանջէ Սերբիա :

« Սերբիա սեպտ. 20ին պատերազմի պիտի քալէ : Միկան իշխանը 18ին Ալէքսիոս պիտի գտնուի : »

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Օրինակի շօրաց հրամանատար

Շէշլէթ փաշա սեպտ. 11 թուով կը հեռագրէ թէ օգնական զօրարածներն , որ 15 վաշտ հետեակ 1 գունդ ձիաւոր և տանկերով լինողանով կը բաղկանայ , Տիշէքի տառա՛ն իր ճանրան կարող լինամին զարնելով ցիր ու ցուն ընելէ յետոյ , պաշարներովն ու առգմամբներքովն հանդերձ՝ անվտանգ Բլէշլայ մտնել և Օսման փաշայի հետ միացնել է :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Աթէնք 20 սեպտ. Բանարիի նախարարութիւնը կազմող նախարարը նոյնը կը մնան : Հաւանակաւ նախար Պ. Բուսուրուսու կամ Պ. Զաւմիա նախագահ պիտի ընտրուին , և Պ. Զիմպրաքը պատերազմական և ծովային դործոց նախարար պիտի անուանի :

Վիեննա 21 սեպտ. Այս պաշտօնական թերթերը կը հաստատեն թէ Սաղապուրի տեսակցութիւնը ներկայ քաղաքականութեան և կացութեան բնաւ փոփոխութիւն չպիտի բերէ :

Փարիզ 21 սեպտ. Պ. Շոն Լըմանի դէմ դատ բացուած է՝ Տէպա լրագիրն մէջ գրած մէկ յօդուածին համար :

Պէրլին 21 սեպտ. Պիամարը իշխանը վաղը մեր քաղաքը կ'սպասուի :

Ռուսիոյ մէջ ցրուեալ տեսարանները բոլոր նախարարները փառաբերելու նպատակաւ ձեռնարկեալ պատերազմը կը պատարտեն : հրաւէր կը կարգան ժողովրդեան որ նոր պատրաստուող կոստրածէ մը խոստան : Ռուսիոյ մէջ հասարակաց կարծիքը շատ յուզեալ է :

Փարիզ 22 սեպտ. Ատենան անձեռնահասութեան պատճառաւ արուած մերժողական դիրք չընդունելով , Պ. Կամպէթիլայի դէմ արուած վճիռն անվտանգ պահեց :

Երեսօրհանական ընտրողներն յրնտրութիւն կոչող հրամանագիրն այսօր հրատարակեցաւ :

Լոնտոն 22 սեպտ. Թայմը լրագիրը Պէլկրաուէն հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Սերբիա՝ փետրուար ամսէն առաջ պատերազմի պիտի չսկսի :

Պ. Կրէվի թիշէքի տեղ Փարիզի իննւորորդ չընտնակին ընտրելութիւնն ընդունեց :

Պուքէշ 23 սեպտ. Իկնաթիէֆ զօրավարն երէկ հոտ հասաւ , թէպէտ գեա. Ջերմն անցած չէ : Նորէն ճանքայ ելաւ իւր Քիշիլ կառուածներն երթալու համար , ուր պիտի կենայ մինչև որ կայսրը դիմք կանչէ :

Թիշլուէն զօրավարը Պուքէշէն անցնելով բանակակեղորնը դնաց :

Պէլկրաու 22 սեպտ. Գնդապետի տեղակալ մ'ը 54 սպայք , որը վերջին հաշտութեան կնքուած ժամանակ պաշտօնանկ եղած էին , վերադարձուցաւ իրենց ծառայութեան կառուցանի :

Փարիզ 24 սեպտ. Լրագիրը Պ. Թիշէքի մէկ երկար յայտարարութիւնը կը հրատարակեն , որ մեռնելէն քանի մ'օր առաջ գրած էր : Յիշեալ յայտարարութիւնը լուծեալ երեսօրհանական ժողովին վրայ դրուած կը խօսի , պահպանողական հանրապետութեան հաստատուելը կը խնդրէ հանրապետական պաշտօնեայներով , և ընտրութեանց ազատութիւնը կը պահանջէ :

Լոնտոն 24 սեպտ.

|             |            |
|-------------|------------|
| Օսմ. քօնա.  | 40         |
| Փոխ. 1865   | 40 1/2     |
| » 1869      | 40 1/8     |
| » 1871      | 39         |
| » 1872      | 47 1/2     |
| » 1873      | 40         |
| » Եղիպտ.    | 58 7/8     |
| Անգլ. քօնա. | 95 1/4 1/6 |

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւրոպական լրագիրը՝ Վիեննա թանին առ Տիկին Թիշէքի տեղած ցաւակցութեան հեռագրին հետեւեալ պատճէնը կը հրատարակեն :

Կ. Պօլիս 10 սեպտ. « Շատ վիշտ զգացի ձեր հոյակապ ամուսնոյն անձին վրայ ըրած ցաւալի կարուստը իմանալով : « Ստասիի տրամելով կը մասնակցի մ'այդ վշտալի արկածին , և կաղաչեմ՝ ձեզ ընդունիլ իմ ամենանկեղծ ցաւակցութեան զգացումներս : »

ԱՊՏԻՒԼ ՀԱՄԻՏ

Կայսերական հրամանաւ՝ Դեսպանաց ներկայացուցիչ Բեամիլ պէ. Մերապուրի ժողովին անդամ անուանեցաւ , առաջին պաշտօնն ալ վրան մնալով :

Ռամնիյր լրագիրը կը ծանուցանէ թէ Միւղիւրիս փաշան պաշտօնով մը Լոնտոնէն փարիզ գնացեր է , ուր քիչ մը ժամանակ պիտի մնայ :

Վագրթ լրագիրը կրտէ թէ Վիեննայի նախարդ Դեսպան Ալէքս. փաշան իւր ատտիճաններէն զրկուեր է Բ. Դուան հրամանաց անհնազանդ գտնուելուն համար , որ զինքը Կ. Պօլիս կը հրաւիրէր :

Առաքիլ Դեսպան Ջիյի կոմսն այս իրիկուն ի ճաշ հրաւիրած է տէրութեանց Դեսպաններն և Բ. Դուան նախարարները :

Լա թիւրքի Պ. Լէյրուի հրաժարման և անոր տեղ Պ. Համիլթօնի Կ. Պօլսոյ Դեսպան ընտրուելուն նկատմամբ Պորտեանայի հեռագրին տրուած լուրը բոլորովին անհիմն կը հրատարակէ :

Վագրթ լրագիրը մինչև հիմա Կ. Պօլսոյ մէջ կաղմուած քաղաքային պահպան զօրաց վաշտերը 33 կը հաշուէ և կրտէ թէ իւրաքանչիւր վաշտ 800-850 հօգիւ կը բաղկանայ :

Կրտուի թէ Ելուսիոյ նախարարութիւնն յառաջիկայ Պայրամի տօնէն առաջ տէրութեան պաշտօնէից ամուսկան մը վճարելու կը պատրաստուի :

Շաբաթ օրը Բուսուրի երկաթուղին յիսուէն չափ Պուլղար ապստամբ բերաւ , որոյ մէջ երեք ալ քահանայք կային :

Շաբաթ օրը քանի մը վաշտ զօրք և ջէրքէջ հիմնադրօր պատերազմի ասպարէզը զրկուեցան :

Շաբաթ գիշեր Բերա բոսթայի փողոցին մէջ Պէստրիոյ հալատակ մ'սպաննուած դատուեցաւ :

Յաւօք սրտի կը լսենք թէ Մարկոսեան Դրիգոր Էֆէնտիի երկրորդ օրդի Լէոն Էֆէնտի Մարկոսեան , որ Բ. Դուան արտաքին գործոց օտար լիզմակցութեանց գիւտանին ընտիր և յովոգակ անգամներէն մին էր , այս գիշեր իւր մահկանացուն կնքեր է 23 ամեայ ծաղիկ հասակին մէջ ի սուգ անմիջեթար ընկղմելով իւր ծընողքն ու եղբարքը :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸ ՈՒՄՈՒՄԻԷ

|                             |       |
|-----------------------------|-------|
| 12 սեպտ. երկուշաբթի իրիկուն | 10.24 |
| 13 սեպտ. երեքշաբթի առաւօտ   | 10.25 |
| ժամ 6 ին                    | 31 75 |
| Բուսուրի երկաթուղի          | 181   |
| Թիշլուէր                    |       |

ԸՆԹԱՑԻՔ ԱՄԺԵԹՎԹՈՑ Կ. Պօլիս 12 սեպտեմբեր Սօթիթէ Ժէնէրալի բաժ. Անգլ. լր. 3 5

|                    |          |       |
|--------------------|----------|-------|
| • Փօլսանակութեան   | •        | 1.25  |
| Կ. Պօլսոյ Պանքային | •        | 2.28  |
| Բրէտի Ժէնէրալ      | •        | 2.    |
| Բրէտի Օսթրո-Թիւրք  | •        | —     |
| Փոխ. 1863          | Ֆր.      | 53    |
| » 1865             | »        | 53    |
| » 1869             | »        | 49 20 |
| » 1872             | »        | 47    |
| » 1873             | »        | 48    |
| Թրամուայ           | Օսմ. լր. | 1 74  |

ԸՆԹԱՑԻՔ ԳՐԱՄՈՑ 12 սեպտեմբեր

|               |     |        |
|---------------|-----|--------|
| Անգլ. լր.     | Վր. | 409    |
| Նաթօնի ոսկի   | •   | 87 3   |
| Իմրէնիալ Ռուս | •   | 88 30  |
| Գլըմից        | •   | 51 7   |
| Հինգ ֆրանք    | •   | —      |
| Հինգ նոյ      | •   | 117 20 |
| Պրիւն         | •   | 162    |

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

Փունջ լրագրոյ շաբաթ առաւ թուոյն մէջ հետեւեալ կը կարգանք . « Հաճութեամբ կը լսենք թէ Ռուսական խորհրդոյ շնորհիւ Ռուսականաց կաճառ մը կաղմուեր է ընդ նախագահութեամբ Գեր. Նար-Պէյիսի սրբադանի , գլխաւորարար մեր աղգային լեզուին անթերի մշակութեան հոգ տանելու համար : Այս կաճառին մէջ անխափր ընդունուած են Հռոմէական ուսումնական աղգայինք ալ , եկեղեցական ու աշխարհական կարգէ : »

ՊԱՏՐԻԱՐԺԱՆ ՓՈՒԱՆՈՐԴՈՒԹԻՒՆ

Ղալաթիոյ խմբակն՝ որ իր շահատակութիւններն , յալոգութեամբ պակեղու համար ամեն գոյն ու դիմակ իւր վրայ կաւնու և կեղծ ժողովրդականութեան քողի ներքև ուսմիկն սկսան ու աջակցութիւնը գրաւել կը նկատի , այս անգամ ալ Պատրիարքական փոխանորդութեան պաշտօնը քահանայ Տ. Յ. Միլեանէն տանելով վարդապետ եկեղեցականի յանձնելու խնդիր մը կ'ստեղծէ և Նոր Դար ալ ատոր փաստարան կը կանգնի :

Թէպէտ շատ աղէկ դիտելով թէ այդպիսի խնդիր մը զլրեւնուէ բուն նպատակն կրն ինչ է . սակայն այդ նպատակն ի վեր հանել առաջ՝ արժան կը համարենք բուն խնդրոյ վրայ խօսիլ :

Գոտատանական խորհրդոյ նախագահութեան պաշտօնը՝ որ Սահմանադրութեան 47րդ յօդուածոյ տրամադրութեամբ Պատր. փոխանորդութեան լծորդեալ է , ուղիղ բանի և դատատանական խորհրդոյ պաշտօնին բնութեան հակառակ է ամուրի եկեղեցականաց յանձնելն :

Ինչ է դատատանական խորհրդոյ պաշտօնը .— բոլոր Սահմ. 47րդ յօդուածոյ երրորդ տրամադրութեան « ընտանեկան վէճերը լուծել » և այլն :

Արդ՝ ընտանեկան վէճերու մէջ՝ որ ըստ տէպ գրուած ամուսնական խնդիրներն են , ինչ զործ ունի ամուրի եկեղեցականն , և ինչպէս կրնայ կառադատել , քանի որ ըստ իւր կոչման խնդրոյն բնութեան վրայ գաղափար ու համոզում չընտրու անեալ և ըստ հայրապետապի կանոնաց ալ ոչ ընտանեաց մէջ կրնայ մտնել , ոչ ալ ամուսնական խնդրոց հետ յարաբերութիւն ունենալ :

Ամուսնական խնդրոց մէջ ամուրի եկեղեցական կամ աշխարհական անձանց իւր դատաւոր չբաղմիլու սկզբունքն արդէն Սահմանադրութիւնն ալ ընդունած է , որոյ 47րդ յօդուածն այսպէս կը արբամադրէ . « Գոտատանական խորհրդոյ կը բաղմիլու ու թիւ իրաւագէտ , և ամուսնացեալ և քառասուն տարին լրացեցած անձեր , որոց չորսն եկեղեցական և չորսը աշխարհական պիտի ըլլան : »

Յիշեալ յօդուածն այնչափ բնական է , և այնքան իմաստուն չընհայեցութեամբ տրամադրեալ , որ վերաբերած խնդրոյն բնութիւնը խիստ լաւ կը բացատրէ , և յորմէ պարզապէս կը հետեւի թէ ամուսնական խնդրոց մէջ ամուրի անձանց իւրե դատաւոր բաղմիլը բնական հակառակ է :



Այնչափ ճշմարիտ է այս, զոր խնդր-  
քոյ ներքե ձգել ուղիւն անգամ անմուռ-  
թիւն է:

Ոչ նուազ անմուռթիւն է նաև ժողո-  
վականութեան համար սրահանջած օրի-  
նական անհրաժեշտ պայմանները նախա-  
գահին համար ներքեի համարիլ:

Այսպիսի երկնայնորթիւն մը ներկայ  
խնդրոյն նկատմամբ օրինաց ոյժն ու ու-  
զին չհասկնալէ անդին չանցնիր:

Ուշադրութեան արժանի կարևոր կէտ  
մ'ալ կայ, զոր կուզենք պարզել:

Գոտապատանական խորհրդոյ նախագա-  
հին իբր զործարկի որոշմանց և իբր միջ-  
նորդ յարաբերութեան մնացուն պաշ-  
տոն կը վարէ, միշտ գործ ունի ամբա-  
տանող և ամբաստանեալ կանանց հետ,  
որք ուղղակի անոր կըղկնին իրենց խն-  
դիրը ներկայելու և որոշումներն ստանա-  
լու, և շատ անգամ յատկին Գոտապատ-  
նական խորհրդոյ հրապարակաւ լսել չը  
կրցածինն առանձինն նմա կը յայտնեն:

Եթէ յիշեալ խորհրդոյ նախագահն ա-  
մուրի եկեղեցական մը լինի, նորապի կին  
մը միթէ կրնայ համարձակիլ իւր ընտա-  
նեկան մէկ դպրանիւն հաղորդել, զոր  
շատ անգամ իր եղբորն իսկ չկրնար յայտ-  
նել մինչդեռ քահանային իւր պաշտօնին  
բնութեամբ միշտ կըմտածի, և այսպէս  
նախագահին կարծիքը խնդրոյն պարագա-  
յնը վրայ գիտակցութեամբ կը լուսաւոր-  
ուի:

Ասոնք խիստ փափուկ կէտեր են, զորս  
այսպէս արեւմտի դատողները կրնան կշա-  
ռաւորել:

Նոր այս առարկութեանցն առջև մեր  
ընդգիտմանները մէկ ըսելիք մ'ունեն:

Պիտի առարկան թէ ինչո՞ւ ուրեմն առ-  
ջէ առաջ Պատր. փոխանորդութեան պաշ-  
տօնը սովորաբար ամուրի եկեղեցականաց  
կը յանձնուէր:

Այդ պատճառները. — Զեղծման ար-  
դիւնը էր այդ սովորութիւնն և ոչ օրէնք:

Նոր Գարու տրամաբան խմբակիւն, որ  
զեղծումն իբր օրէնք կընդունի և ազգա-  
յին կենաց վրայ գիտական տեղեկութիւն  
բնաւ չունի, կրնէ:

«Անգղիացիք խիստ լաւ բնութիւն մ'ու-  
նին», որ իրենց հնաւանդ սովորութեանէն  
չխլբաւ չեն բաժնուիր, այլ շատ մըտա-  
ծեալէն վերջը հազիւ հազ կը մկրտանան  
գայն և նոր բան մը կընդունին»:

Իր այս մէջ բերած առարկութիւնն  
իւր աղիւսութեանը հաստատող փաստ  
մ'է, այնպէս որ իր վիզն իր ձեռքովը  
կը կտրէ. փաստն զի ըստ հայրապետագիր  
խիստ կանոնաց բնաւ ներքի չէ որ ա-  
մուրի եկեղեցականները քաղաքաց մէջ բը-  
նակին, ընտանեաց մէջ մեռա դոնեն  
ստանձարձակ, և ընտանեկան հոգեբայ ըլ-  
լաղին:

Հայրապետական սոյն պատուէրին  
հակառակ փարսկոյնները կանոնական խիստ  
պարտիներ կը հրաւիրեն իրենց վրայ, և  
հազիւ թէ վերջին թուակի կրնան արժա-  
նանալ: Տես Կանոնագիրքն և Ս. Շնոր-  
հալոյ Ընդհանրականն:

Մեր երանալնոր՝ նախնի Ս. Հայրա-  
պետը խիստ իմաստուն շրջապէսութեամբ  
և հեռատեսութեամբ այդ կանոնները զը-  
րած է. իսկ այսօր ցաւալի է տեսնել  
որ անոնց ոչմի գեղծումն այնչափ հան-  
րացի է, որ մեր ամուրի եկեղեցական-  
ները քաղաքաց և ընտանեաց մէջ արձակ  
համարձակ մուտ գտնելով, շատ անգամ  
հասարակաց պայթիակցութեան առիթ կըն-  
ծային զժողովարար, որոց օրինակները  
չենք ուզեր մէջ բերել:

Յոյժ փափաքելի է եկեղեցաց կանո-  
նացը վերադառնալ, որով ոչնէ հասա-  
րակաց դայթակցութեան առարկայ եղող  
պատահարներ կը դադրեն, մեքենայու-  
թեանց առաջը կանոնէր, և Ազգն ալ  
քիչ շատ խաղաղութեան երես կը տեսնել:

Բուն խնդրոյն վրայ այսչափ մը խօ-  
սելէ ետեւ կանցնինք ցոյց տալու թէ  
Պատրիարքական փոխանորդութիւնն ա-  
մուրի եկեղեցականաց յանձնել ուղեկոն  
նպատակն ի՞նչ է:

Խմբակին գլխաւոր անդամները Տ. Յ.  
Մկրեանէն զգոյժ են, և իրենց այս զբո-  
ղոնութեան պատճառն ալ սա է որ իրենց  
կանոնն ու քաղաքաց և ընտանեաց իւ-  
րենց հրամաններն ու արդիւնքն արժան-  
ջութեանը չկատարեր, և անոնց ալ անձ-

նական անխիղճ շահուցը դէմ արդիւնքներ  
կը յարաբերանէ. մէկ խօսքով՝ խմբակին  
մարդը չէ: Մանաւանդ Նոր Գարու խմբ-  
ակին սոյնստի կըլիք Տ. Յ. Մկրեանի  
դէմ գիտական գլխաւոր և կրնանք ըսել  
միակ պատճառն այս է որ յիշեալ խմբա-  
կին իրեն համար շահու աղբիւր մ'ըբաժ-  
նը անհամեմատ խնդիրներն, որոց հա-  
մար փոխանորդ և փաստաբան կանոն-  
քով երկու կողմէն ալ առատ դրամ կը  
կորցնէ: Տ. Յ. Մկրեանն ընտանեաց քաղ-  
քայման և մշտնջենաւոր թշուառութեան  
գլխաւոր պատճառ մ'ըող այս տեսակ  
արդիւնքն և անարարիւ շահագրգռութեանց  
առաջին առիւթը համար՝ ամուսնական դա-  
տերու մէջ փոխանորդ և փաստաբան չըն-  
դունելու որոշում հանել տուաւ: Իսկ  
ժողովէն, որով Նոր Գարու խմբակին  
պատուաւոր և առատարէր շահու աղ-  
բիւրը մէկէն ի մէկ ցամքեցաւ. ուստի  
բնական էր որ Նոր Գարու խմբակիւն և  
անոր համախոհներն իրենց շահուն ար-  
դիւնք եղող անձ մը կործանելու համար  
ամեն հնարք և մեքենայութիւն ի գործ  
դնէին:

Եւ որովհետեւ խմբակին աշխարհական  
անդամները՝ փոխանակ Տ. Յ. Մկրեանի  
թիւն ուրիշ քահանայ մը ընտրելի առաւ:  
Ջարիկէն, ամուրի եկեղեցականներն իրենց  
հետ չեն համաձայնիր, և հաւանական է  
որ հերձուած ու բաժանուած տեղի կու-  
նենայ իրենց մէջ, ուստի խմբակին ա-  
մուրի եկեղեցական անդամները զոչաջը-  
նելու համար կուզեն որ Պատր. փոխա-  
նորդութեան պաշտօնն ըստ նախընթաց  
զեղծման՝ ամուրի եկեղեցականաց յանձ-  
նուի, և իրենց այս կարծիքն յառաջ մղե-  
լու համար տնտեսագիտական խնդիր մ'ալ  
կը յարաբերանեն, առարկելով թէ վարդա-  
պետ մը ափսոս 500 դրամ, զոչ կըլլայ,  
մինչդեռ քահանայ մը՝ որ ընտանեաց տէր  
է՝ 1500 դրամ ալ չաղբիւր, և աճհամ-  
բայրի կ'աղիւսնալէ:

Խնդրոյն բնութիւնն՝ այն է դա-  
տապատանական խորհրդոյ նախագահու-  
թեան պաշտօնն ի նկատի առնելով, կը-  
սենք թէ սկզբունքը միջոցի զոչելու պատ-  
ճառանք մ'է իրենց այս առարկութիւնն և  
ոչ ուրիշ բան:

Պատր. արժանաւոր փոխանորդի մ'ա-  
մուր 1000 դր. աւելի մճարելով Հայոց  
ազգը ոչ կը սնանկանայ և ոչ ալ իր վրայ  
թեթեւ ծանրութիւն մ'անդամ կ'ըլլայ:  
Հրապարակի վրայ այսպիսի անհիմն զի-  
տողութիւններ՝ պարզապէս ազգին ինք-  
նասիրութիւնը կը վրաւորեն:

Ազգը բանիմաստ, արժանաւոր, ձե-  
ռնհաս և պաշտօնին բնութեանն յարմա-  
րութիւն ունեցող պաշտօնեաներու պէտք  
ունի, և իր այս պէտքը չկրնար ո՛ր և է  
նկատմանց դռնել:

Գալով աճհամբայրի խնդրոյն, կըտեսն-  
թէ կամաւոր նուէր մ'է այդ, որ կըրն-  
հաւուց շատնուիր, և զոր սիրով կընդունի  
ամեն եկեղեցականն, կուզէ ամուսնացնալ:

Հետեւաբար, ինչպէս ըսինք, կուստի-  
ցական խնդիր մ'է այս, որ անձնական ա-  
տելութեանէ ծաղում ստանալ է պարզա-  
պէս:

Պատր. փոխանորդութեան կարևոր  
պաշտօնն ամուրի եկեղեցականաց յանձ-  
նելու առաջարկն ուրիշ հետեւութեան մ'ալ  
կը յանգնի, այն է քահանայից դատուն  
միճակն ուրաւի կարելի է նուազանցնել,  
և քահանայներն ի նուազանցութեան պա-  
հելով՝ ի հարկին կամակատար կըր զոր-  
ծիւնը դարձնել:

Այս ալ պարզական դրութեան ար-  
դիւնք է, և շատ ցաւալի է տեսնել, որ  
փաստաբան ամուրի եկեղեցականներ իրենց  
կամքն ու հաճոյքը գոհացնելու համար  
խմբակին գլխաւոր աշխարհական անդա-  
մաց հետ միացած օտարաւոր դերութիւն  
ներ կուզեն մեր մէջ մտցնել:

Ժամ է արդ իրաց լայն վիճակին դար-  
ման տանիլ, եթէ չենք ուզեր որ Ազգն  
իր Հայկական նախատիւը կորսնցնէ:

### Ա. Զ. Դ.

Առ Մեծ Եւրոպոյ Թագ. Խորհրդի Ս.

Դեբոք Եկեղեցացի Սահմանի

Թ. Գեորգ Եկեղեցացի Սահմանի

Հուրդը իւր պաշտօնավարութեան  
քառամեայ շրջանը ներկայ սեպտ-  
մբ լրացուցած և իւր հրաժարագիրը  
Սեպ. Կ. Դ. վարչութեան մատուցած  
ըլլալով, այս անգամ միմեկն Սրբազան  
Պատրիարք հօրմէն նոր ընտրութեան  
հրահանգը ընդունելով՝ անմիջապէս  
դորձադրութեան սկսեցնել, և ըստ  
Սահմանագրութեան «ընտրողական  
ժողովոյ» գաղաւթի քուէարկութեամբ  
ըր ի գլխաւորութիւն ձեռք ընտրողաց  
թագ. Խորհրդոյ համար եռապատիկ  
ընտրութեաց ցանկը պատրաստելով կը  
նկայացնեմք՝ որ հետեւեալն է.

Մեծապատիւ Ե. Գեորգ.

1. Աղամ Աղաբեան
2. Աղաբիկ Մկրտիչ
3. Բաբէլ Սարգսեան
4. Գառար Յարենիւրեան
5. Գեորգ Յովհաննէսեան
6. » Տ. Գրիգորեան
7. Գրիգոր Գալաթիական
8. Կարապետ Զիւճեան
9. » Միտենի
10. Կուրնիկ Տ. Պողոսեան
11. Մանուկ Բաղարճի
12. Մարտիրոս Սարգսեան
13. Միստ Պապայեան
14. Միտիկ Մերիկ Մալաթի
15. Միքայէլ Սաւաքեան
16. Միքայէլ Սարգսեան
17. Յակոբ Լուսինեան
18. » Նիքոլեան
19. Յովակիմ Բաղարճի
20. Յովհաննէս Իշխանի
21. Յովհաննէս Հաղարճի
22. Յովհաննէս Սիւսեան
23. Յովհաննէս Զիւճեան
24. Նաղարէթ Նաւակիւճի
25. Նշան Նշատաճեան
26. Պաղտիկ Կերճեան
27. Պարտա Զիւճեան
28. Սահակ Ճիւղճի
29. Սարգիս Քիւսէլճի
30. Սեպուհ Թեալիսեան
31. » Սարգիս
32. Սեպուհ Բաղարճի
33. Ստեփան Կէփլէկեան
34. Տիրատուր Կիւրճի
35. Քերտիկ Զիւճի
36. » Բաղարճեան

Ընտրող թագեցիքդ աղաւ էք  
թէ վերոգրեալ եռապատիկ ցանկին  
մէջէն և թէ գրուէն անձանց քուէ  
տալ. բաւական է որ ընտրելի անձը  
ըստ 67 յօդուածոյ Սահմանագրու-  
թեան ընտրող և ընտրելի ըլլալու  
իրաւունքն ու հանգամանքն ունե-  
նայ:

Քուէարկութեան օրն է յառա-  
միկայ կիրակի սեպտ. 18, որ պիտի  
ըլլայ Նոյն օրը Ն. վարդապետ հետ մար-  
տարանի մէջ, և քուէարկութեանը  
պիտի կատարուի ժամը 15ն մինչ ի  
ժամ 4, որմէ անմիջապէս ետքը ըլլ-  
է համարի գործողութիւնը պիտի ըս-  
կըսի:

Ընտրելիները պէտք է որ ան-  
ւամբ, մականուամբ և արհեստովը  
չանակէք ձեր թուէթովին մէջ,  
և այնպէս անձամբ վերադառնալ կի-  
րակի օրը բերէք մինչ և ի ժամ 4,  
ուր ընտրողական ժողովը պատրաստ  
է ձեր քուէն ընդունել, և եթէ բա-  
նաւոր պատճառաւ չկրնար անձամբ  
բերել, այն առին կը պարտիք ձեր  
քուէն կամ նամակի և կամ պահաւար-  
նի մը մէջ զնելով, և միանգամայն  
ձեր ստորագրութիւնը Նոյն նամա-  
կին մէջ և կամ պահաւարանի վրայ դը-  
րելով յղել առ նախագահն ընտր-  
ժողովոյ հաւատարմ տնձի ձեռքը:

Աւելորդ չեմ համարիր յիշել որ՝

1. Անդունելի են առանց ստո-  
րագրելու նամակի և կամ պահաւարանի  
իրկուած քուէներն:
2. Արեւել ժամանակէն ետքը ե-  
կամ կամ զրկուածներն:
3. Թղթատարի ձեռք ծրարձար

զրկուած քուէներն որոնք կատա-  
ւանաց տեղի կուտան:

Յայտնի է որ այս ամեն պայման-  
ներուն զանցառու ընտրողը իրա-  
ւունք չունենար բողոքելու:

Մնամ աղօթարար  
Քարողիչ Ս. Գեորգ Եկեղեցացի  
և նախագահ ընտր. ժողովոյ  
Կրեմն Վ. Սահման

10 սեպտ. 1877  
Սահմանի

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԹԵՍՍՆՈՒՍԻ ԲԱՐՈՅՈՅՈՅԹԻՒՆ

Այս պատուական գիրքն այս ան-  
գամ շնորհիւ Դեր. Խորէն Եկեղեցացի  
որ Միթիթարեան՝ զրաբաւէն համա-  
ռօտութեամբ աշխարհաբարի թարգ-  
մանուելով, իղմիրի Տէտէեան եղբարց  
տպարանէն ի լոյս ընծայեցաւ մաքուր  
տպագրութեամբ: Յուսովի է որ այս  
անմահ գործը մեծ ընդունելութիւն  
պիտի գտնէ ազգային վարժարաննե-  
րէն և ընթերցասէր հասարակութե-  
նէն:

Գիրքը կազմեալ և 316 երեսէ  
բաղկացեալ ըլլալով՝ կըլսեալ Եկեղե-  
չամի Չիլիկիրէր ճատտէսի թիւ 2  
Ս. Դ. և Եղեղեանի գրատունը և  
ուրիշ գրաւաճառաց քով: Գին 3 ֆր.

Տ Է Մ. Ս. Դ. Ա. Յ.

ՀԱՌ ՈՃՈՅ

ԲՆԱԶԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԱՅԻՆՈՒԹԻՒՆՔ

Տէքարդ Գաղղիացի մեծանուն  
փիլիսոփային «Գլուխ գործոյն» է, որ  
Մեծ. Առաքել Շարապիսեանի աշ-  
խատարկութեամբ Հայերէնի թարգ-  
մանուելով՝ Արմաշու վանքէն հրատա-  
րակեցաւ զեկեղեցիկ տպագրութեամբ:  
Այս գիրքը 272 երեսէ կը բաղ-  
կանայ և կը ծախուի Եկեղեչամի Չի-  
լիկիրէր ճատտէսի թիւ 2 Ս. Դ. և  
Եղեղեանի գրատունը և գրաւաճա-  
ռաց քով: Գին 2 ֆրանք:

Ն. Ս. Ն. Ա. Ն.

ԳՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ-  
ԵԱՅՍ Ս. ԵԿԵՂԵՑՈՒՆ

Ի պէտս նախընթաց դատարար Աղ. Զարեանաց

—

Կ Բ. Ա. Կ. Ա. Ն.

ԳՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԲՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ-  
ԵԱՅՍ Ս. ԵԿԵՂԵՑՈՒՆ

Ի պէտս շարժողութեան դատարար Աղ. Զարեանաց

ՅՈՒՆԱՅ

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԵՊԻՍԻԱՆՈՍ ՆԱՐ ՊԵՅ

Առաջարկութեամբ և վարչապետութեամբ

Աղ. Զարեան Կրեմնեան Ժողով

Տպագրեալ հրատմանու

Տ. ՆԵՐՍԵՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐԿԻ Կ. ՊՈԼՍՈՅ

Իր ծախուի ամեն գրաւաճառաց խա-  
նութիւններն ի գին  
Նախնական Քրիստոնէական 50 սանդիւմ  
կրթական Քրիստոնէական 80 սանդիւմ:  
Կեղեցիկ տպագրութեամբ և զրաբաւէն համա-  
ռօտութեամբ: Յակոբեան խան թիւ 15:  
Գաղղիացի համար մեծ քանակութեամբ  
զնոյններուն՝ հարկերին 10 զեղջ պիտի ըլ-  
լայ:

—

Ո. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Տ. Բ. Ե. Ի. Բ.

Քերթնաւոր, Մահ Սեպտուար, ձեռք,

Այլ և այլ, Յուսեղեան:

Հեղինակ իւր ինչ ինչ ոտանաւոր  
և արձակ գրուածներն և լամարդինի  
Գաղղիացի բանաստեղծին Սեպտուար  
հանուն գրաբար տաղաչափեալ թարգ-  
մանութիւնն անմիջապէս է այն զըր-  
բուկին մէջ:

Իր ծախուի Եկեղեչամի Չիլիկիր-  
էր ճատտէսի թիւ 2, Ս. Դ. և Եղե-  
ղեանի գրատունը, և ուրիշ գրա-  
ւաճառաց քով:

Գին 1 ըստանոց թուղթ



ԱՌԻՆԱԼԻ ՄԱՐԻԶՈՒՆԻՆ

ՀԱՂԻՆԱԿ

Տաշ Կոստանի

Թարգմանեց իս. Ե. Պարսեանուդեան

Սոյն գեղեցիկ վիպասանութեան, որ միայն երկու հատորէ կը բաղկանայ, երկրորդ հատորն ալ իզմիրէն հասած ըլլալով, կը ծախուի Եւնի Խամի Զինկիրէր ճատտէսի, թիւ 2 Ս. Դ. և Եղմանեան գրատունը և այլ գրաւաճառաց քով: Գին 2 ֆրանք:

ԽՈՐՀՐԴԱՌՈՐ ԿԴՁԻ

Օ. Գ. Պ. Պ. Ն. Ա. Բ. Ե. Կ. Ե. Բ.

Ազգայնոցմէ խիստ լաւ ընդունելութիւն գտնուող «Աշխարհի շրջանն ու թառն օրուն մէջ» վեպին հեղինակ Ժիւլ Գիլի մէկ ուրիշ հետաքրքրաշարժ և հրահանգիչ գործն է, թարգմանեալ Ս. Մամուրեան Ե. ֆէնտիէ, որուն առաջին հատորն իզմիրէն Պոլս հասած ըլլալով, կը ծախուի Եւնի Խամի Զինկիրէր ճատտէսի, թիւ 2, Ս. Դ. և Եղմանեան գրատունը և ուրիշ գրաւաճառաց քով: Ամբողջ գործը երեք հատորէ կը բաղկանայ: Գին 2 ֆրանք:



ԱՅՏԵՐԻ ՎԻԿՈՐԸ

Այդ օր իր մաղերուն թափելը չուզեր, «Այլերի վիճօր» կոչուած մաղի անուշահոտ ջուրէն գործածելու է. ուրիշ ամեն տեսակի մաղի ջուրերը կամ իւրերը՝ որ մաղ չի թափելու համար կը ծախուին, բոլորն ալ անօգուտ են. իսկ վիկօրի օգուտը միլիօնաւոր փորձերով անհնուած է, և Պոլսոյ ու Եւրոպայի մէջ օր օրի գործածողներուն թիւը կ'աճուի: Անոնք որ իրենց մաղերուն գեղեցկութիւնը կորսնցնելու վրայ են, չուտով գործածեն ան ջուրէն որ ի վերջոյ չլրջանա թափելու վրայ եղող մաղերը կը հաստատան ու կ'ամրապնդէ, թափածներուն տեղը մաղ կը բուսցնէ երբոր մաղերուն արմատը քլաւտած չէ, ու ճերմակած մաղերը անպատճառ իր նախկին բնական գոյնին կը բերէ, գործածելուն կերպը չիշերուն հետն է. կը ծախուի Կ. Պոլսի Ղալաթիա Միհնասեան և Ընկերաց Ամերիկայի Մաղադան:

ՕՃԱՌ



Միւշահոտ օճառ, մորթի կը կակուղցնէ ու լեղի ջուրով ալ կը փրկուի: Եւնի Խամի Զինկիրէր ճատտէսի, թիւ 2 Ս. Դ. և Եղմանեան գրատունը և այլ գրաւաճառաց քով: Գին 2 ֆրանք:



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱԶԱՆ

Կ. Պոլսի Ղալաթիա Միհնասեան և Ընկերաց Ամերիկայի Մաղադան կը ծախուի, աղելու ճերմակ կտաւներ, ու սեղանի ծածկոց և այլն, սեղանի արծաթած պատառաքաղ, գրգալ և այլն. կապի լամպաներ, սեղանի ճերմակ յախճապակէ սպասք Անգլիոյ տեսակէն, քարեօղաններ, փրքէ ծածկոց, ընթան սալան և այլն, խոհանոցի վերաբերեալ անօթներ, կարի գործիքներ, և ուրիշ անթիւ պիտանի վաճառք կը ծախուին չափաւոր գներով:



ՇԻՐԲԵԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈՐԻՆԱԿԱՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1877 ՍԵՊՏԵՄԲԵՐ 4 ՀԻՆԴՈՒՐԹԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆԶԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐ 30

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈՐԻՆԱԿԱՆԵՐԸ

| Ժամ   | Երբեք ելիք   | Թիւ |
|-------|--|-----|
| 12 45 | Եւնիմաճալէն Մէզարայ. Պէյլեքտէրէ, Թարապիւ, Եւնիքէյ, Սթէնիա, Էմիրի. Պոյաճ. Բ. Հիսար, Պէյլեք: (Սեպտ. 15-ն ժամը 12 1/2-ին):                                | 33  |
| 4 30  | Եւնիմաճալէն Մէզարայ. Պէյլեքտէրէ. Թարապիւ, Եւնիքէյ, Էմիրի, Պոյաճ. Բ. Հիսար, Պէյլեք:   | 34  |
| 2 30  | Բ. և Ա. Գալաթիէն Եւնիմա Մէզար. Պէյլեքտէրէ, Թարապիւ, Եւնիքէյ, Էմիրի. Բ. Հիսար, Պէյլեք, Արնաւ. Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:                                | 32  |
| 4 30  | Եւնիմաճալէն Մէզար. Պէյլեքտէրէ. Գիւրճալ. Թարապիւ, Եւնիքէյ, Սթէնիա, Էմիրի. Պոյաճ. Բ. Հիսար, Պէյլեք, Արնաւ. Օրթաք. Պէյլեքտէրէ:                            | 33  |
| 6 45  | Եւնիմաճալէն Պէյլեքտէրէ. Թարապիւ, Պէյլեքտէրէ, Եւնիքէյ, Էմիրի, Գալաթի, Բ. և Ա. Հիսար, Գալաթի. Սթէնիա. Պէյլեքտէրէ, Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 2   |
| 8     | Բ. և Ա. Գալաթիէն Եւնիմաճալ. Մէզար. Պէյլեքտէրէ, Թարապիւ, Պէյլեքտէրէ, Եւնիքէյ, Էմիրի, Պոյաճ. Բ. Հիսար, Պէյլեք, Արնաւ. Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:         | 20  |
| 10    | Մէզարայ. Պէյլեքտէրէ. Թարապիւ, Եւնիքէյ, Էմիրի, Բ. Հիսար, Արնաւ. Օրթաք. Պէյլեքտէրէ:  | 22  |

ԱՅՏԵՐԻ ԳԵՂԷՆ

|       |   |    |
|-------|---|----|
| 12 30 | Արնաւ. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 4  |
| 4     | Արնաւ. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 4  |
| 4 30  | Պէյլեքտէրէ, Արնաւ. Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 22 |
| 2 40  | Արնաւ. Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:             | 4  |
| 3     | Արնաւ. Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:             | 4  |
| 4 45  | Արնաւ. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 22 |
| 10 45 | Արնաւ. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 4  |
| 11    | Արնաւ. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 2  |

ԱՅՏԵՐԻ ԵԼԷՐԷ

|       |   |    |
|-------|---|----|
| 12 30 | Պէյլեքտէրէ. Թարապիւ. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Բ. Հիսար, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 25 |
| 42 30 | Վանիքէյն Չէնիք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:   | 2  |
| 2     | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:   | 20 |

|       |   |    |
|-------|---|----|
| 4 45  | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 25 |
| 9     | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 4  |
| 10 20 | Վանիքէյն Չէնիք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:            | 25 |

ԿԱՄԱՐԱԶԷՆ ԵՒՆՈՂ ՇՈՐԻՆԱԿԱՆԵՐԸ

Երբեք ելիք

|       |   |    |
|-------|---|----|
| 4 45  | Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:             | 2  |
| 2 30  | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 33 |
| 4 45  | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 20 |
| 6 30  | Բ. և Ա. Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:     | 4  |
| 8 45  | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 22 |
| 9 30  | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 34 |
| 10 45 | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 32 |
| 11 45 | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 25 |

ԱՅՏԵՐԻ ԳԵՂԷՆ

|       |  |    |
|-------|--|----|
| 4 30  | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 4  |
| 2 45  | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 22 |
| 9 30  | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 4  |
| 10 45 | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 2  |
| 11 40 | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 4  |
| 11 40 | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 2  |
| 12    | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 4  |

ԱՅՏԵՐԻ ԵԼԷՐԷ

|       |   |    |
|-------|---|----|
| 3 45  | Բ. և Ա. Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ: | 25 |
| 9 40  | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:                        | 25 |
| 10 30 | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:                        | 33 |
| 11 45 | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:                        | 20 |
| 11 40 | Պէյլեքտէրէ, Գալաթի. Օրթաք. Պէյլեքտէրէ:                        | 22 |

Այս լրագիրը չաբաթը երեք անգամ կը հրատարակուի, երեք անգամ թիւ և չաբաթ օրերը, Բաժնետիրացիներուն տեղերն են Ղալաթիա Միհնասեան ճատտէսի թիւ 198, Դ. օրի խան Մալաթի խմբագրատունը:

Իսկ դաւանաց մէջ հետեւեալ հոգաբարձուաց սենեակները:

ԻԶՄԻՐ. Ստեփան աղա Տէմէն. Եւնիմաճալէն. Խոսրով Էֆ. Լալիքեան. ՊՐՈՒՍԿԱ. Ստեփան աղա Թանկերեան. ԹԵԲԵՐՍԱՂ. Յովակիմ աղա Ուզունարեան:

ՏՐԱՊԵՉՈՆ. Խաչատուր աղա Մամուրեան. ԿԱՐԻՆ. Կարապետ աղա Թանկերեան:

ՎԱՆ. Կարապետ աղա Նաթանեան. ՄՈՒՇ. Մկրտիչ աղա Փօթիկեան. ԵԱՇ. Մ. աղա Խաչիկեան.

ՅՈՒՏԵՍ. Ֆերիտ աղա Ս. Ֆերիտեան. ԵՐԶԱՅԱՏ. Թադէոս աղա Բաղրատեան:

ՍԻՎԵՐՆԻՍԱՐ. Սթ. Տ. Ուրբէն. Ուրիշ քաղաքներէ օտարապետ ռազմական և քաղաքական մէկուս հետ կրնան թղթակցել:

ԽՄԱՂԻՐ—ՏՆՕՐԷՆ

Կ. Ս. ԻԻԹԻՆԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ ԶԱՆԱԹԻՍ ՆՕՐՈ ԽԱՆ

NORTH BRITISH AND MERCANTILE INSURANCE COMPANY

ՆՕՐԹ ԲՐԻԹԻՇ ԵՆՏ ՄԵՐԿԱՆԹԻՆՍԻ  
Լոնտոն և Լոնդոնի միջին առևտրային ընկերություն

Բաժնետիրացիներու զբաղմունքը 2,000,000  
Վճարեալ գումարներ 250,000  
Պահուստի գումարներ 1,040,744—1,290,744  
Հիմնական գումարներ 1875-ին հրապարակուած հաշիւը 917,178

Ստորագրեալը իրենց բաղմամբ յաճախողաց և այս քաղաքի ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն որ իրենց վերոյիշ ալ երկու ընկերութեանց միացեալ գործակալար ընտրուած ըլլալով, այնպիսի գումարներ մը մէջ կը գտնուին որով հրապարակուած հաշիւները կը բաղմամբ իրենց կը ծանուցանեն:

Ապահովութեան կարգադրութիւնները կը բաղմամբ երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժնուած մը, և այնպիսի ապահովութեան և գումարներու ընկերութեան ալ կրնայ աւելի մեծագումար տարապիտութիւն բռնողներու ինքնինքն ինքնապայտուել:

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունուիլ ինչպէս Բերայի Ղալաթիայ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մոտակայ քաղաքները գիւղերը և գաւառները:

Գրեթէ ամեն և տեղի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է զիմեջ Միացեալ ընկերութեանց գրաւաճառար Ղալաթիայ Բէյլեքտէրէ քաղաքի մօտ Կալաթի խան թիւ 5:

NORTHERN ASSURANCE COMPANY

ՆՕՐԹ ԶՐԻՆ  
Լոնտոն և Լոնդոնի միջին առևտրային ընկերություն

Բաժնետիրացիներու զբաղմունքը 5,000,000  
Վճարեալ գումարներ 150,000  
Պահուստի գումարներ 580,000—550,000  
Հիմնական գումարներ 1875-ին հրապարակուած հաշիւը 551,000

Ստորագրեալը իրենց բաղմամբ յաճախողաց և այս քաղաքի ընդհանուր հասարակութեան կը ծանուցանեն որ իրենց վերոյիշ ալ երկու ընկերութեանց միացեալ գործակալար ընտրուած ըլլալով, այնպիսի գումարներ մը մէջ կը գտնուին որով հրապարակուած հաշիւները կը բաղմամբ իրենց կը ծանուցանեն:

Ապահովութեան կարգադրութիւնները կը բաղմամբ երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժնուած մը, և այնպիսի ապահովութեան և գումարներու ընկերութեան ալ կրնայ աւելի մեծագումար տարապիտութիւն բռնողներու ինքնինքն ինքնապայտուել:

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունուիլ ինչպէս Բերայի Ղալաթիայ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մոտակայ քաղաքները գիւղերը և գաւառները:

Գրեթէ ամեն և տեղի մանրամասն տեղեկութեանց համար պէտք է զիմեջ Միացեալ ընկերութեանց գրաւաճառար Ղալաթիայ Բէյլեքտէրէ քաղաքի մօտ Կալաթի խան թիւ 5: